



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 15 » 02 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0022-23

Ձեռնարկողը՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ

ք. Երևան, Կիկյան 16

Գործունեությունը՝ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի Վաղաշենի
ջրամբարի հակաֆիլտրացիոն միջոցառումների
իրականացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ

Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲՓ № 0022-23

<15> 02 2023թ.

**Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի Վաղաշենի ջրամբարի
հակաֆիլտրացիոն միջոցառումների իրականացման աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«ՀԳՇՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/, Ծրագիր
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայր

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 3)-րդ կետի ա. ենթակետի՝ «ջրամբարներ, արհեստական լճեր, ջրավազաններ՝ 100 000 - 1 մլն խմ», վերը նշված նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Ներածական մաս. «Գեղարքունիք» ԶՕԸ-ի կողմից սպասարկվող տարածքում Լոտ 3 փաթեթի՝ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի Վաղաշենի ջրամբարի հակաֆիլտրացիոն միջոցառումների իրականացման, դոտացիոն ջրագծի կառուցման նախագծի մշակումը կատարվել է «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից՝ ՏԿԵ նախարարության ջրային կոմիտեի /որը հանդիսանում է ծրագրի պատվիրատու/ նախնական նախագծին համապատասխան /N ԶԿ-ԵՄԾՁԲ-22/1 պայմանագրի տեխնիկական բնութագրի հիման վրա/: Ծրագրի նպատակն է՝ ոռոգման ջրի կայուն և արդյունավետ օգտագործումը՝ խթանելով գյուղատնտեսության զարգացումը և նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության հանդեպ:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքն ընկած է Սևանի ավազանի հարավային մասում, Գեղամա և Վարդենիսի լեռների միջև՝ ծովի մակադակից 1920- 2020մ բարձրությունների վրա: Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի վարչական տարածքում, որի հողերի նպատակային նշանակությունը ջրային է: Վաղաշենի ջրամբարը արտահունային է և սնուցվում է Մանասի առու ջրանցքից: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնապահպանական տարածքների, բնության և պատմամշակութային հուշարձանների հետ:

Համաձայն ծրագրի՝ նախատեսվում է Գեղարքունիք ԶՕԸ-ի սպասարկման տարածքներում իրականացնել Վաղաշենի ջրամբարի հակաֆիլտրացիոն միջոցառումներ և օրվա կարգավորիչ ջրամբարում /ՕԿՁ/ հավաքվող ջուրը համայնքի հողատարածքները սպասարկող Մանասի առու տեղափոխելու համար՝ ջրամբարի ամենացածր /2453.80/ նիշում կառուցել 426x5մմ տրամագծի, L=28.0մ երկարությամբ մետաղական խողովակաշար, այնուհետև 450x17.2մմ տրամագծով և 332 գծ.մ երկարությամբ ստորգետնյա տեղադրմամբ անցկացնել պոլիէթիլենային խողովակներ:



Ջրհեռացնող խողովակաշարի ուղեգիծն անցնում է գոյություն ունեցող ջրանցքի ուղեգծով, նոր հողատարածքների օգտագործման անհրաժեշտություն չկա: Որպես ջրավազանի հակաֆիլտրացիոն միջոցառում նախատեսվում է տեղադրել բենտոնիտային գորգ: Ջրամբարի նախագծային առավելագույն ծավալը 150000 խմ է:

Գոյություն ունեցող հողային թասով ջրամբարի հատակից և շեպերից առկա է ֆիլտրացիա և կուտակված ջուրն անտեղի կորում է և ջրավազանում ջուր կուտակելը անհնարին է: Ջրավազան ջուրը լցնելու համար հարավային հատվածի մոտակայքով անցնող Մանասի առու ջրանցքից (ՆԿ77+00) առկա է հողային առու: Դատարկման հանգույցը գտնվում է ջրավազանի հյուսիսային հատվածում, որտեղ իրականացված է մոտ 2.5-3.0 մ բարձրությամբ կիսաքանդ բետոնային պատնեշ հանգույց՝ խորքային փականով: Փականից հետո ջուրը հողային առուներով նախատեսված է տեղափոխել դեպի ոռոգման դաշտեր: Մոտեցնող ու հեռացնող հանգույցները երկար ժամանակ չաշխատելու և չշահագործելու պատճառով գտնվում են քայքայված և անմխիթար վիճակում: Ըստ ԶՕԸ-ի տվյալների՝ ջրամբարի սպասարկման գոտում տեղակայված ոռոգվող հողերը կազմում են 202 հա: Ջրի պահանջարկը օրվա ընթացքում փոփոխվում է, իսկ գիշերային ժամերին ոռոգում ընդհանրապես չի իրականացվում՝ արդյունքում ցերեկային ժամերին առաջանում են ջրի պահանջարկ, գիշերային ժամերին անտեղի և անհարկի կորուստներ:

Նախագծի իրականացման դեպքում /ջրամբարում առկա կորուստների նվազեցում և շեպերի հակաֆիլտրացիոն միջոցառումների իրականացում/, հնարավոր կլինի գիշերվա ժամերին ջրամբարում կուտակել ջրերը և այդ ջրով ոռոգել ցերեկային ժամերին: Նախագծով նախատեսված է նաև վերականգնել ջրի մոտեցնող ու հեռացնող կառույցները:

Առաջարկվող ջրավազանի ցուցանիշներ են.

- Ջրամբարի ծավալը – 150 000 խմ,
- Գիշերային 10 ժամվա ընթացքում ամբարվող ջրի ծավալը – 14400 խմ ($0.4 \text{ խմ/վրկ} \times 10 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ}$),
- Լցման օրերի (գիշերային) քանակը – 10.4 օր ($150000 \text{ խմ} : 14400 \text{ խմ/օր}$)
- Ոռոգման 3 ամսվա ընթացքում դատարկման ու լցման ցիկլերի քանակը – 8.6 անգամ ($90 \text{ օր} : 10.4 \text{ օր}$),
- Ոռոգման 3 ամսվա ընթացքում ջրի ամբարման ընդհանուր ծավալը – 1.29 մլն.խմ ($8.6 \times 150000 \text{ խմ}$):

ՕԿԶ-ի կառուցումը բաղկացած է հիմնական հետևյալ հանգույցներից.

1. Ջրավազանի հանգույց,
2. Ջրավազանին ջրի մոտեցնող հանգույց՝ ջրընդունիչ կառուցվածք և մոտեցնող ջրագիծ (ջրավազանը լցնելու համար),
3. Ջրավազանից ջրի հեռացնող հանգույց՝ ջրընդունիչ կառուցվածք և ջրհեռացնող ջրագիծ (ջրավազանը դատարկելու համար),
4. Ջրավազանի այլ կառույցներ՝ ցանկապատում, լուսավորություն, փականների էլեկտրաշարժիչների աշխատանքի համար հոսանքի ապահովում և ավտոմատացում:

Ջրավազանի /հանգույցի/ կառուցման աշխատանքները ներառում են.

- ջրավազանի հողային աշխատանքներ /գրունտի փորում և լիրաթումբի իրականացում/,
- ջրավազանի ներսի մակերեսի՝ հատակի ու շեպերի գրունտի խտացում /ապահովելով խտացման գործակիցը ≥ 0.9 /,
- ջրավազանի հատակի դրենաժային համակարգի կառուցում /25 սմ հաստությամբ ճալաքարա-կոպճային շերտով, դրենաժային խողովակային ցանցով/:



- ջրավազանի ներսի մակերեսի փափուկ հողով ծածկույթի իրականացում /30 սմ հաստությամբ նախապատրաստական շերտի խտացումով, խտացման գործակիցը ≥ 0.9 /,

- խտացված նախապատրաստական շերտի վրա բենտոնիտային գորգի տեղադրում (գլանափաթեթներով),

- բենտոնիտային գորգի վրա փափուկ հողի շերտի տեղադրում՝ 30 սմ հաստությամբ որպես պաշտպանիչ շերտ /մանրահատիկ ($d \leq 2$ սմ) խտացված գրունտով, ավազակավ կամ կավահողով/,

- պաշտպանիչ հողի շերտի վրա /միայն ջրավազանի շեպերի հատվածում/ պաշտպանիչ շերտի իրականացում՝ քարե շարվածքով:

Բենտոնիտային գորգի (որպես օրինակ՝ “Бентотек” АС 100) հաստությունը նախատեսված է 6.4 մմ: Այն ունի մի շարք առավելություններ և էկոլոգիապես մաքուր է:

Մանասի առու ջրանցքում առկա է 400լ/վրկ ջուր: Այն ունի 0.6մ լայնությամբ, 0.5 խորությամբ սեղանաձև կտրվածք՝ երկաթբետոնե երեսապատում: Նախատեսվում է ջրանցքի 7.6մ երկարությամբ հատված ապամոնտաժել և կառուցել ջրթող կառուցվածք, բետոնե հոր /3.0 x1.6մ չափերով, 1.0մ խորությամբ/: Հորում՝ մինչև խողովակ նախատեսված է աղբորսիչ ցանց և խորքային փական ևս մեկ հարթ /1000x600մմ/ փական տեղադրվելու է դեպի ջրանցք ջրի հոսքը կարգավորելու համար: Բետոնե հորից ջուրը /պոլիէթիլենե՝ 450x17.2մմ, L=119.0մ և պողպատե՝ 426x5մմ L=26.5մ/ խողովակներով կտեղափոխվի ջրամբար:

Ջրամբար ջրի մուտքը անվանաս ապահովելու համար նախատեսվում է 6մ երկարությամբ, 4.0x3.0մ չափերով, 0.3մ հաստությամբ երկաթբետոնե սալ և քարի շարվածք: ՊԿ0+28-ում նախատեսվում է 332մ երկարությամբ, 450x17.2մմ տրամագծով, ստորգետնյա տեղադրմամբ պոլիէթիլենային խողովակաշարի կառուցում, որը կմիանա Մանասի առու ջրանցքին: ՕԿՋ-ի տարածքը լուսավորելու համար նախատեսված է լուսավորության ավտոնոմ համակարգ, որն իր մեջ ներառում է արևային մոդուլիցքավորման կարգավորիչ փողոցային լուսավորության լամպ, որը քիչ էլեկտրական էներգիա է սպառում: Երբ սկսում է մթնել, ֆոտոէլեմենտը ակտիվանում է և սկսվում է ցրված փայլ: Լուսադեմին ֆոտոթքիջը բացում է շղթան և անջատում լամպերը: Ջրավազանի տարածքում նախատեսվող բարեկարգման աշխատանքները ներառում են,

- տարածքի հարթեցում,
- երթևեկելի մասի խճագրունտային ծածկույթ՝ 20% գրունտ և 80% խիճ - 20 սմ,
- ՕԿՋ-ի տարածքի ցանկապատում մետաղական ցանցով - մետաղական ցանց $h=1.50$ մ և փշալար $h=0.50$ մ: Մետաղական կանգնակները $\Phi 102 \times 3$ մմ տեղադրվում են բետոնե հիմքի վրա -B15 դասի,
- դարպասի և դռնակի տեղադրում:

Շինարարության տևողությունը հաշվարկվել է 12 ամիս: Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը /485.9 մ³/շին.ժամ, միջին օրական 1.329 մ³/ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Հայտում ներկայացվել են շինհրապարակի կազմակերպման լուծումների, շինարարության ընթացքում օգտագործվող տեխնիկական միջոցների և օգտագործվող նյութի վերաբերյալ տեղեկատվություն:

Գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ:



Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը կարող են առաջանալ՝

- ջրավազանի վերակառուցման ընթացքում,
- բետոնային գորգի տեղադրման ընթացքում
- ջրավազանին ջրի մոտեցնող և ջրավազանից ջրհեռացնող խողովակների կառուցման ժամանակ

- շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ՝ դիզելային վառելիքի այրման արդյունքում,

- հողային աշխատանքների իրականացման /գրունտի փորում և լիրաթումբի իրականացում/, շինարարական թափոնների, աղբի առաջացման հետ կապված,

- շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում՝ աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Վերը ներկայացված աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքներով և տեխնիկական միջոցների աշխատանքով՝ դիզելավառելիքի օգտագործման դեպքում:

Մասնավորապես, օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները պահել պաստառներով ծածկված վիճակում՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,

- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով,

- պարբերաբար ստուգել և վերահսկել տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,

- շինարարական թափոնների և հումք տեղափոխող մեքենաների համար կսահմանվի երթեր՝ ըստ ժանմանակացույցի,

- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

Գործունեության ենթակա տարածքում (վերակառուցվող ջրամբար) բուսահողը բացակայում է, պահպանության միջոցառումների անհրաժեշտություն չկա: Տարածքը ներկայացված է տիղմի կուտակմամբ (լճային նստվածք, որն կուտակվել է 50 և ավելի տարիների ընթացքում՝ ջրամբարի շահագործման ժամանակահատվածում): Տիղմային շերտի ծավալը /որը կազմում է 28000մ³/, հանվող բնահողերի ծավալների /95.5 հազար մ³/ հետ միասին՝ ծածկով ապահովված բեռնատարներով տեղափոխվելու են Մարտունու համայնքապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,

- հանվող տիղմը և գրունտը առանց պահեստավորման, անմիջապես հեռացնել շինհրապարակից,

- աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքները բարեկարգել, բերել նախկին տեսքի՝ օգտագործելով հանված բնահողերը, առաջացած թափոնները տեղափոխելով համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ջրամբարի սպասարկման գոտում, կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություններ չեն դիտարկվում:

Հնարավոր սոցիալական ազդեցությունները գործունեության տարածքում կբացառվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման



միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են ԲԿՊ-ի Աշխատանքի և առողջության ապահովման պլանում: Այդ միջոցառումներից կարևորվել են՝ կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրումը, հրապարակում աշխատող բանվորական կազմին անվտանգության միջոցների, խմելու ջրի և հանգստի կազմակերպման պայմանների ապահովումը:

Գործունեության ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, այդ թվում՝ հանված մնացորդային հողային զանգվածը կծառայի որպես պատնեշ և տեղում կօգտագործվի: Զրթողի քայքայված բետոնի ծավալը և շինարարական աշխատանքներից առաջացող թափոնների 240 խմ ծավալը սահմանված կարգով կտեղափոխվեն Մարտունու համայնքապետարանի կողմից հատկացված քաղաքային աղբավայր՝ համաձայն կնքված պայմանագրի: Շինարարական թափոնները տեղափոխող բեռնատարները լինեն սարքին վիճակում, իսկ անվադողերը՝ լվացված:

Շինարարության ընթացքում թափոնների կառավարման հետ կապված բնապահպանական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար առաջարկվել են կիրառելի սկզբունքներ, այդ թվում՝ թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրեր) թափոնների հնարավորինս կրկնակի օգտագործում կամ վերամշակում, վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասագերծման կամ տեղակայման արտոնագիր, տարածքում կենցաղային աղբի կուտակման համար աղբամաններով ապահովում:

Վաղաշեն բնակավայրի ոռոգման համակարգի Վաղաշենի ջրամբարի վերականգնման աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում են դրական սոցիալ-տնտեսական ազդեցությունները: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ավելացնել ոռոգելի հողատարածքները և առավել արդյունավետ օգտագործել ոռոգման ջուրը:

Վերը թվարկված շինարարական աշխատանքների արդյունքում ազդեցությունները նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները ներառված են Հայտի բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում (ԲՍԿՊ): Շինարարության ընթացքում աշխատանքային պայմանների անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակներին հակազդելուն ուղղված միջոցառումները ևս ամփոփվել են պլանում:

ԲՍԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների իրականացմանը պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները: Դրանց արդյունավետությունը ստուգվելու է սահմանված ժամանակահատվածում կանոնավոր մոնիթորինգային ստուգայցերի միջոցով, որի արդյունքները կգրանցվեն մոնիթորինգի ստուգաթերթիկում: Մեղմացնող միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը կազմում են ծրագրի արժեքի մոտ 1,2% -ը:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Գեղարքունիքի մարզպետարանը, առողջապահության, արտակարգ իրավիճակների, նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մարտունի համայնքի Վաղաշեն



բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով և վերլուծելով հայտում ներկայացված շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ բնապահպանական և սոցիալական վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ Ծրագիրը դրական ազդեցություն կունենա ոռոգման համակարգերի ազդեցության գոտում գտնվող Վաղաշեն բնակավայրի բնակչության վրա և խթան կհանդիսանա նրանց սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման համար՝ լրացուցիչ ոռոգելի հողատարածքների ավելացման հաշվին: Շրջակա միջավայրի վրա և ծրագրի ազդեցության ենթակա համայնքների բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում և ստորև բերված փորձաքննական պահանջների կատարումն ապահովելու պարագայում շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկանխարգելվեն, կամ կնվազեցվեն:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է Մարտունի համայնքի ղեկավարի կողմից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ շինարարական ճամբարի տեղադրման վայրի, հանված մնացորդային հողային զանգվածի, ջրամբարում կուտակված տիղմի ու շինարարական թափոնների հեռացման տարածքների վերաբերյալ:

2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել Հայտի բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում (ԲՍԿՊ) նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի Վաղաշենի ջրամբարի հակաֆիլտրացիոն միջոցառումների իրականացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Սկրտչյան

